Հ Ա Ղ Ո Ր Դ Ո Ւ Մ

«ՀՀ-ում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի «լվացման», ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի 2004-2005 թթ. գործունեության մասին

Ներածություն

Հայաստանի Հանրապետության Նախագահի 2002 թ. մարտի 21-ի ՆԿ-1075 կարգադրությամբ ստեղծված «ՀՀ-ում դրամանենգության, պլաստիկ քարտերի և այլ վճարային գործիքների բնագավառում զեղծարարության, փողերի «լվացման», ինչպես նաև ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հարցերով» միջգերատեսչական հանձնաժողովի (այսուհետև՝ Հանձնաժողով) վրա Հայաստանի Հանրապետության Նախագահի 2004 թ. հոկտեմբերի 8-ի ՆԿ-234Ա կարգադրությամբ դրվեց նաև Եվրոպայի խորհրդի Փողերի «լվացման» դեմ պայքարի միջոցառումները գնահատող հատուկ փորձագետների հանձնաժողովի (ՄԱՆԻՎԱԼ) առջև ստանձնած պարտավորությունների ներդրումն ապահովելու պարտականությունը:

Հայաստանի Հանրապետության Նախագահի կարգադրությամբ Հանձնաժողովից պահանջվում էր հաստատել Եվրոպայի խորհրդի փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի հարցերով ստանձնած պարտավորությունների կատարման միջոցառումների ժամանակացույց (այսուհետև՝ Միջոցառումների ժամանակացույց) և ներկայացնել ՀՀ համապատասխան պետական մարմիններին ու պաշտոնատար անձանց: Վերջիններս պարտավոր էին իրականացնել Միջոցառումների ժամանակացույցով իրենց վերաբերող միջոցառումները:

Միջոցառումների մեծ մասն իրականացվել է: Այս իմաստով Հայաստանին տրված էր մեկ տարի ժամանակ՝ օրենսդրական փոփոխություններ կատարելու և համապատասխան ինստիտուտներ ձևավորելու, կամ էլ հիմնավոր հակափաստարկներ ներկայացնելու համար:

Այդուհանդերձ, Եվրոպայի խորհուրդը, ընդունված կարգի համաձայն, Հայաստանից պահանջել է մինչև նոյեմբերի 10-ը ներկայացնել «Առաջընթացի հաշվետվություն»: Հաշվետվությունը պետք է կազմվի ՄԱՆԻՎԱԼ-ի կողմից ներկայացված հարցաշարին պատասխանելու միջոցով, որտեղ Հայաստանի Հանրապետության՝ դեռևս չկատարած միջոցառումների մասով հարցերը նույնպես շեշտադրված են:

Վերոնշյալ խնդիրների լուծման և Հանձնաժողովի կողմից իրատեսական Միջոցառումների ժամանակացույց սահմանելու համար սույն Հաշվետվությունը դառնում է խիստ արդիական:

Որոշվել է, որ Հանձնաժողովը պետք է պարբերաբար հաշվետվություն ներկայացնի Հայաստանի Հանրապետության Նախագահին: Հաշվետվությունը Հայաստանի Հանրապետության Նախագահի դատին ներկայացնելը Հանձնաժողովին հնարավորություն կընձեռի՝ ձևավորել Հայաստանի Հանրապետության Նախագահի համար ընդունելի իրազեկման չափորոշիչը: ՄԱՆԻՎԱԼ-ի որոշումներով Հայաստանի Հանրապետության և ՄԱՆԻՎԱԼ-ի անդամ մյուս երկրների գնահատման գործընթացը կտևի մինչև 2010 թ. և կընթանա առնվազն 4 փուլով: Հայաստանի Հանրապետությունն անցել է միայն 1-ին փուլը (Եվրոպայի խորհրդին և ՄԱՆԻՎԱԼ-ին ավելի ուշ անդամակցելու պատճառով): Արևելյան Եվրոպայի մի շարք երկրների 2-րդ և 3-րդ փուլերի հաշվետվությունները ցույց են տալիս, որ բացի օրենսդրական փոփոխություններից ՄԱՆԻՎԱԼ-ի կողմից դրվում են նաև որակական և ինստիտուցիոնալ բարդ պահանջներ:

Նման տրամաբանությամբ սույն հաղորդումը կանդրադառնա հետևյալ հարցերի քննարկմանը. ա) Հաշվետու ժամանակաշրջանում (2004 թ. հուլիսից մինչև օրս) Հանձնաժողովի կատարած աշխատանքները, բ) Միջոցառումների ժամանակացույցի ներդրման և ՄԱՆԻՎԱԼ-ի միջանկյալ հաշվետվության հարցերը, գ) Հանձնաժողովի հետագա մարտավարությունը և գործունեության ուղղությունները: Հաշվետվությունը կամփոփվի համապատասխան եզրահանգումներով:

Դիտարկվող ժամանակաշրջանում Հանձնաժողովի կատարած աշխատանքները

Հանձնաժողովը գումարել է 5 նիստ, որոնցից 2-ը 2004 թվականին, իսկ 3-ը՝ 2005 թվականին: Հանձնաժողովի նիստերն ընթացել են նախապես կազմված օրակարգով և կոնկրետ փաստաթղթերի քննարկմամբ: Հանձնաժողովի նիստերն արձանագրվել են, իսկ որոշումները՝ քվեարկվել և հաստատվել Հանձնաժողովի անդամների կողմից:

Հանձնաժողովը քննարկումների արդյունքում ձևավորել և 2005 թ. հաստատել է Հանձնաժողովի գործունեության կանոնակարգը, որի համաձայն ձևավորվել է աշխատանքային խումբ՝ Հանձնաժողովի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում աշխատելու համար: Հանձնաժողովի գործունեության քարտուղարությունը կազմակերպում է Կենտրոնական բանկը:

Հաշվետու ժամանակաշրջանում Հանձնաժողովի գործունեությունը ներկայացնելու համար ստորև բերվում է դրա ժամանակագրությունը.

ա. 2004 թ. հոկտեմբերի 22-ի երկրորդ նիստում Հանձնաժողովը հաստատել է Միջոցառումների ժամանակացույցը, ըստ որի միջոցառումների վերջնաժամկետ է սահմանվել 2005 թ. հունվարը:

բ. 2005 թ. փետրվարի 20-ի նիստում Հանձնաժողովն անդրադարձել է Միջոցառումների ժամանակացույցի կատարման ընթացքին, և հաշվի առնելով, որ «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների օրինականացման ևահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքը ՀՀ ազգային ժողովի կողմից ընդունվել է ուշացումով, կատարման նոր ժամկետ է սահմանել մինչև 2005 թ. հունիսը:
Միաժամանակ, ՀՀ արդարադատության նախարարության ներկայացուցչին առաջարկվել է նախարարությունում ստեղծել համապատասխան մասնագետներից կազմված աշխատանքային խումբ, որը, ելնելով ՄԱՆԻՎԱԼ-ի առաջարկներից, ՀՀ-ում փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի շրջանակներում կուսումնասիրի օրենսդրական դաշտը և կներկայացնի մասնագիտական եզրակացություն:
Որոշվել է Միջոցառումների ժամանակացույցին անդրադառնալ ՀՀ արդարադատության նախարարության մասնագիտական եզրակացությունը ստանալուց հետո:
Նիստում ներկայացվել են նաև Կենտրոնական բանկում ստեղծման գործընթացում գտնվող Ֆինանսական դիտարկումների կենտրոնի (ՖԴԿ) ձևավորման աշխատանքները և ռազմավարական մոտեցումները:
Հանձնաժողովը որոշում է կայացրել՝ Հանձնաժողովի կազմը ընդլայնելու համար դիմել Հայաստանի Հանրապետության Նախագահին, քանի որ ՄԱՆԻՎԱԼ-ի մի շարք պահանջներ ենթադրում են ՀՀ հարկային և մաքսային մարմինների ներգրավում: Փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի գծով ՀՀ միջազգային համաձայնագրերով ստանձնած պարտավորությունների կատարումն արդյունավետ գնահատելու նպատակով որոշվել է ներգրավել նաև ՀՀ արտաքին գործերի նախարարության ներկայացուցչին:

գ. 2005 թ. մարտին Կենտրոնական բանկը ստացել է ՀՀ արդարադատության նախարարության փորձագիտական եզրակացությունը, ըստ որի քրեական, քրեական դատավարության օրենսգրքերում ՄԱՆԻՎԱԼ-ի կողմից առաջարկվող փոփոխությունները (քննարկված են հաջորդ մասում) անհամատեղելի են ՀՀ օրենսդրության տրամաբանության հետ և չեն կարող ներդրվել ՀՀ-ում: Հիմնավորումները հիմանականում կրկնում են այն հակափաստարկները, որոնք 2003 թ. տրամադրվել էին Հայաստան ժամանած ՄԱՆԻՎԱԼ-ի փորձագետների խմբին: ՄԱՆԻՎԱԼ-ի փորձագետներն առաջարկները ձևավորելիս հաշվի են առել այդ հակափաստարկները, սակայն չեն փոխել իրենց կարծիքը:
դ. 2005 թ. սեպտեմբերի 19-ի Հանձնաժողովի նիստում քննարկվել է Հանձնաժողովի կանոնակարգը և հաստատվել է ժամանակացույց՝ ՄԱՆԻՎԱԼ-ի կողմից առաջարկվող միջանկյալ «Առաջընթացի հաշվետվություն» կազմելու վերաբերյալ, ըստ որի, հաշվի

առնելով Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության փորձագիտական եզրակացությունը, պետք է քննարկվեն նաև դեռևս չներդրված առաջարկները: Այդուհանդերձ, որոշում է կայացվել հաստատել հետևյալ սկզբունքը. ՄԱՆԻՎԱԼ-ի միջանկյալ կամ «Առաջընթացի հաշվետվությունում» բարձրացված հարցերին պատասխանելիս պետք է տալ նոր տեղեկատվություն, որը նախորդ հաշվետվությունում չի եղել, և ցանկացած փաստարկ պետք է հիմնավորել կոնկրետ օրենքների կամ ենթաօրենսդրական ակտերի, կամ դրանց համապատասխան հոդվածների պատճենները կցելով:
Նիստում ՄԱՆԻՎԱԼ-ի «Առաջընթացի հաշվետվության» կազմման վերջնաժամկետ է սահմանվել նոյեմբերի 10-ը. մինչև այդ հաշվետվության ամփոփումը և հաստատումը ենթադրվել է Հանձնաժողովի ևս 2 նիստ:
Հանձնաժողովի նույն նիստում քննարկվել են նաև ՀՀ կենտրոնական բանկի և Հանձնաժողովի կազմում ներառված գերատեսչությունների՝ ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի ոլորտում համագործակցության երկկողմ համաձայնագրերի վերաբերյալ դիրքորոշումները: Նշվել է, որ այդ համաձայնագրերի տեքստում անհրաժեշտ է ընդգրկել ներպետական համագործակցության ոլորտում առկա միջազգային ու օտարերկրյա առաջավոր փորձը, ինչպես նաև հաշվի առնել յուրաքանչյուր համագործակցող գերատեսչության գործունեության առանձնահատկությունները:

ե. 2005 թ. հոկտեմբերի 24-ի Հանձնաժողովի նիստում քննարկվել են ՄԱՆԻՎԱԼ-ի «Առաջընթացի հաշվետվության» և Հայաստանի Հանրապետության Նախագահի ամենամյա հաշվետվության նախնական տարբերակները: Համաձայնություն է ձեռք բերվել այդ փաստաթղթերը ներկայացնել վերջնական խմբագրման և, պատրաստ լինելուն պես, հաստատել Հանձնաժողովի առաջիկա նիստում:
Հանձնաժողովի օրակարգում քննարկվել է նաև համագործակցության երկկողմ համաձայնագրերի կառուցվածքը: Որոշվել է Կենտրոնական բանկի կողմից նախապատրաստել նշված համաձայնագրերի նախնական տարբերակները, դրանք ուղարկել համապատասխան գերատեսչություններ, իսկ հաջորդ նիստում ամփոփել հնարավոր առաջարկություններն ու դիտողությունները:
Հանձնաժողովի գրեթե բոլոր նիստերին քննարկման են ներկայացվել հաշվետվություններ Կենտրոնական բանկի Ֆինանսական դիտարկումների կենտրոնի կատարած աշխատանքների և փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի բնագավառում փաստացի և հնարավոր տեխնիկական օժանդակության ծրագրերի մասին:
Հանձնաժողովը պարբերաբար քննարկել է ՄԱՆԻՎԱԼ-ում Հայաստանի Հանրապետության պատվիրակության աշխատանքների հաշվետվությունները, որոնք պարունակում է տեղեկատվություն ՄԱՆԻՎԱԼ-ի անդամ երկրներում գործող փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մեխանիզմների ու դրանցում առկա խնդիրների մասին:

Միջոցառումների ժամանակացույցի ներդրման և ՄԱՆԻՎԱԼ-ի միջանկյալ հաշվետվության հարցերը

Միջոցառումների ժամանակացույցը Հանձնաժողովի կողմից հաստատվել է 22.10.2004թ. նիստում, որի նպատակն է՝ ՄԱՆԻՎԱԼ-ի կողմից սահմանված Հայաստանի Հանրապետության առաջին փուլի հաշվետվության պահանջների ներդրումը: Այդ պահանջների ներդրման գնահատականը կարևոր է ՄԱՆԻՎԱԼ-ի միջանկյալ կամ «Առաջընթացի հաշվետվությունը» կազմելու համար:

<u>Ծանոթություն:</u> Եվրոպայի խորհրդին անդամակցելուն զուգահեռ Հայաստանի Հանրապետությունը պարտավորություն է ստանձնել՝ ներդնել ՄԱՆԻՎԱԼ-ի փողերի «լվացման» դեմ պայքարի միջոցառումները գնահատող հատուկ փորձագետների հանձնախմբի կողմից ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի ոլորտում ներկայացվող պահանջները, որոնք հիմնված են ՖԱՏՖ-ի 40 և 9 հատուկ առաջարկությունների, ինչպես նաև Եվրամիության դիրեկտիվների վրա: Անդամ երկրների կողմից ՄԱՆԻՎԱԼ-ի պահանջներին համապատասխանությունը գնահատվում է փուլային և միջանկյալ հաշվետվությունների միջոցով: Ընդ որում, փուլից փուլ հաշվետվություններին ներկայացվող պահանջները խստանում են:

ՄԱՆԻՎԱԼ-ի հանձնախումը 2004 թվականի հուլիսի 9-ին ներկայացրել է Հայաստանի Հանրապետության վերաբերյալ առաջին փուլի հաշվետվությունը, որը վերաբերվում է փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջոցառումների չափորոշիչների համապատասխանության հարցերին: Հաշվետվության գնահատականների մի մասը ենթակա էր պարտադիր ներդրման, իսկ մյուս հարցերը ձևակերպվել են որպես Հայաստանի Հանրապետության իշխանություններին ուղղված առաջարկություններ: Ընդ որում, նշված գնահատականների ներդրման ժամկետները սահմանափակվում են մինչև 2007 թվականը, երբ նախատեսվում է *Հայաստանի Հանրապետության վերաբերյալ երրորդ փուլի հաշվետվությունը:*

<u>Միջոցառումների ժամանակացույցով սահմանվել են հետևյալ խումբ միջոցառումները.</u>

- Փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման քրեականացում և հասկացությունների համապատասխանեցում ՄԱԿ-ի չափորոշիչներին,
- Փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման կապակցությամբ նախնական միջոցառումների և բռնագրավման մեխանիզմների լրամշակում,
- Փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի իրավասու ստորաբաժանման ձևավորում,
- Փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման գործերի քննության ընթացքում օպերատիվ-հետախուզական գործողությունների իրականացման օրենսդրական դաշտի ստեղծում,

- ֆինանսական և ոչ ֆինանսական հաստատությունների համար Փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի ներքին հսկողության մեխանիզմների ձևավորում:

Միջոցառումների ժամանակացույցի օրենսդրական փոփոխություններ պահանջող միջոցառումների ներդրումը ենթադրում է հետևյալ ընթացակարգը. պահանջվող միջոցառումների կապակցությամբ կազմակերպել մանրամասն քննարկում, կատարել մասնագիտական եզրակացություններ, կազմել օրենսդրական և նորմատիվային կարգավորման փոփոխությունների փաթեթ, որը ներկայացվելու է հաստատման, ապա դրվելու է գործողության մեջ:

ՄԱՆԻՎԱԼ-ի «Առաջընթացի հաշվետվության» հարցաթերթիկում ընդգրկվել են հարցեր, որոնց վերջին գնահատումից հետո Հայաստանում առաջընթաց չի արձանագրվել: Նշված հարցերին անդրադառնալու համար քննարկվել է 2 դիրքորոշում.

1. Ներկայացված առաջարկությունները Հայաստանի Հանրապետության համար սկզբունքորեն անընդունելի են. այդ տեսակետի հիմնավորում,

2. Բարձրացված հարցադրումները նոր իրավական հայեցակարգեր են. դրանց շուրջ քննարկումները շարունակվում են և մինչև հաջորդ գնահատումը Հայաստանի հանրապետության իշխանությունները կհստակեցնեն իրենց դիրքորոշումը այդ հարցերի վերաբերյալ:
Քննարկման արդյունքներով առավել նպատակահարմար է համարվել երկրորդ դիրքորոշումը:

Բացի այդ, ՄԱՆԻՎԱԼ-ի միջանկյալ հաշվետվության հարցաթերթիկն անդրադառնում է ՀՀ-ում արձանագրված հետևյալ բնագավառների առաջընթացին.

- ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի ու վերահսկողության քաղաքականության ոլորտում բարեփոխումներ,
- ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի կազմակերպական միջոցառումների արդյունավետություն,
- ՓԼ/ԱՖ-ի հանցակազմերում կատարված փոփոխություններ,
- Ֆինանսական և ոչ ֆինանսական հաստատություններում ներքին հսկողության ռեժիմի արդյունավետություն,
- Կասկածելի գործարքների հաշվետվական գործընթացի ներդրում,
- Միջազգային համագործակցության ոլորտում կատարված աշխատանքներ,
- Օտարերկրյա երկրների հարցումների հիման վրա նախնական միջոցառումների և բռնագրավման դեպքերի կիրառման վիճակագրություն,
- Այլ դրույթներ:

Հարցաթերթիկը լրացնելիս հանգամանալից ներկայացվել են ինչպես վերջին գնահատումից հետո ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի օրենսդրական փոփոխություններն ու

վիճակագրությունը, այնպես էլ կատարված ինստիտուցիոնալ բարեփոխումները: Մասնավորապես, նշվել է, որ Հայաստանում ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի Լիազորված մարմին է ճանաչվել Կենտրոնական բանկը, որը ստեղծել է կառուցվածքային առանձին ստորաբաժանում՝ Ֆինանսական դիտարկումների կենտրոնը: Ներկայացվել են կենտրոնի կառուցվածքը, կազմակերպական և ֆինանսական ինքնուրույնությունը, գործունեության հետագա ուղղությունները: Հարցաթերթիկում ընդգծվել է, որ իրավապահ ու վերահսկող մարմինների համակարգում ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի հարցերով մասնագիտացել են նաև առանձին ստորաբաժանումներ:

Հանձնաժողովի մարտավարությունը և գործունեության ուղղությունները

Փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի միջազգային ջանքերին Հայաստանի Հանրապետությունը մասնակցում է այնպիսի մարտավարությամբ, որը ենթադրում է գործունեության նոր և բազմազան ոլորտներ այդ երևույթի դեմ պայքարող Հայաստանի Հանրապետության նախարարությունների և գերատեսչությունների համար: Դրանք Հանձնաժողովի գործունեության տեսանկյունից հետևյալն են.

1. 2007 թվականին ակնկալվող՝ Եվրախորհրդի ՄԱՆԻՎԱԼ-ի հանձնաժողովում ՀՀ ստանձնած պարտավորությունների կատարման երրորդ փուլի հաշվետվությանը նախապատրաստվելը: ՄԱՆԻՎԱԼ-ի կողմից երրորդ փուլի հաշվետվությանը ներկայացվում են որակապես ավելի խիստ պահանջներ: Եթե առաջին փուլի հաշվետվության խնդիրները սահմանափակվում էին ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի օրենսդրության և մեխանիզմների առկայության պահանջով, ապա երրորդ փուլի ընթացքում վերանայվելու են նաև ընդունված օրենսդրության և մշակված մեխանիզմների արդյունավետ կիրառման հարցերը (օրինակ, կասկածելի գործարքների քանի հաշվետվություն է ներկայացվել Լիազորված մարմին, ՓԼ/ԱՖ-ի գործերով քանի մինչդատական և դատական վարույթ է հարուցվել, ինչ գումար է առգրավվել կամ բռնագրավվել, և ովքեր են դատապարտվել՝ միայն հանցանք կատարողները, թե նաև հանցակիցները): Ուստի, այդ հաշվետվությանը նախապատրաստելու համար Հանձնաժողովը նախ պետք է ձևակերպի երրորդ փուլին ներկայացվող պահանջները, ապա, Միջոցառումների ժամանակացույցի համաձայն, պահանջներին համապատասխան հետևողական միջոցառումներ ձեռնարկի: Ոչ պակաս կարևոր է կազմակերպել և կոորդինացնել ՄԱՆԻՎԱԼ-ի պատվիրակության ՀՀ, որի հետ կապված՝ Հանձնաժողովը պետք է կազմի միջոցառումների նոր ծրագիր:
2. Հանձնաժողովի կազմում ընդգրկված գերատեսչությունների միջև երկկողմ համագործակցության մեխանիզմի ձևավորումը, այդ թվում՝ փողերի «լվացման» և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի բնագավառում արդյունավետ ներպետական համագործակցության զարգացումը: Այդ նպատակով ներկայումս

քննարկվում են ՀՀ կենտրոնական բանկի և այլ գերատեսչությունների միջև ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի հարցերով համագործակցության համաձայնագրերի վերաբերյալ տեսակետները:

3. ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարին առնչվող բոլոր գերատեսչությունների կողմից տեղեկատվական բազաների, ավտոմատացված վիճակագրության ձևավորման կարողությունների զարգացումը: Սրանց բացակայությունը կարող է խնդիրներ ստեղծել ՄԱՆԻՎԱԼ-ի երրորդ փուլի հաշվետվության հետ կապված:

4. Հայաստանի Հանրապետության միջազգային արդյունավետ համագործակցությանը խոչընդոտող խնդիրների հաղթահարումը: Մասնավորապես, քննարկման են ենթակա տարբեր գերատեսչությունների կողմից միջազգային համաձայնագրերով ՓԼ/ԱՖ-ի բնագավառում տեղեկատվության փոխանակման կոորդինացման, համատեղ հետաքննչական գործողությունների, իրավական ու հետաքննչական օժանդակության փոխանակման կանոնակարգման հարցերը և հնարավոր միջազգային նոր անդամակցությունների հարցը: Այս խնդիրը լուծելու համար կարևոր է ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի հարցերին առնչվող բոլոր միջազգային համաձայնագրերի հետազոտումը և համադրումը Հայաստանի Հանրապետության հնարավորությունների հետ:

5. ՖԴԿ-ի եռամյա ռազմավարությամբ սահմանված նպատակների կենսագործմանն ուղղված ջանքերի համատեղումը, որը պարտադիր է հաջորդ գնահատման փուլերը հաղթահարելու համար: ՖԴԿ կողմից մշակված հայեցակարգային փաստաթղթերը և գործունեության ծրագրերը մշտապես կներկայացվեն Հանձնաժողովի քննարկմանը և հաստատմանը: Հատկապես կարևոր է Հանձնաժողովում ընդգրկված գերատեսչությունների մասնակցությունը ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի՝ իրենց ոլորտում իրավասու անձանց ուսուցման և վերապատրաստման առանձին ծրագրերի համատեղ մշակմանը և, սահմանված Միջոցառումների ժամանակացույցի համաձայն, դրանց իրագործմանը:

6. Բացի միասնական Միջոցառումների ժամանակացույցից անհրաժեշտ է, որպեսզի յուրաքանչյուր գերատեսչություն մշակի ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի իր ծրագրերը և պարբերաբար ներկայացնի Հանձնաժողովի նիստերին՝ քննարկման: Դա կարևոր է, քանի որ միասնական Միջոցառումների ժամանակացույցը չի կարող պարունակել տեխնիկական և ինստիտուցիոնալ բոլոր մանրամասները: Սա ենթադրում է նաև Հանձնաժողովին կից աշխատանքային խմբի ակտիվացում և ՓԼ/ԱՖ-ի դեմ պայքարի մասնագիտացված աշխատանքային խմբերի ստեղծում: